

5

U. S. Bureau of
Mint and Refining



Baltimore
1882

OK 2003

383
102

8-93
U-6.4

ԱշԽԱՏՈՒԵՐ
ՍԱՆԴՈՒՂՔԸ

Վ Ե Գ Ի Կ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՒԱՆ


Ե. ՏԻԳՐԵՆԻ ՊՐԵՄԻԱ

1882

8-93

Ա-64

ԱՐ



6122

Дозволено Цензурою. 19 Августа 1882 г.
Тифлисъ.

Типографія Эмина Теръ-Григорянцъ въ Эривани, на углу
Астафьевской и Бебутовской улицъ.

Ը Ն Ծ Ա Յ

ԽԵԼՕՔ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ

ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

ԵԿ ԽՄ

ՎԻՐԳԻՆԵԻՍ

ԱՅԽԱՑՈՒԹԵԱՆ

ՍԱՆԴՈՒՂՔԸ



օքրիկ Վառվառէնպա-
րապելու հետ բոլո-
րովին սէր չունէր
երբ նա վազում էր,
խաղում էր իւր ըն-
կերների հետ, նը-
կատվումէր նորա մէջ
և ուրախութիւն, և սրամառութիւն,
և հնարագիտութիւն, իսկ երբ պի-
տի ուսանէր, ամենայն ինչ ձանձրա-
ցնում էր նորան, ամենայն ինչ դը-

Ժուար էր թվում Երբ գաստիարակուհին նորան յանդիմանում էր, նաև լուց էր լինում և կարծում էր թէ նորա հետ անարդարութեամբ են վարվում:

Մի անգամ նա շատ դառն օդի պատահեց. պիտի աւարտէր նկարը, բայց այդ նորան շատ էր ձանձրացրել և նա անհոգութեամբ քամում էր մատիառվ. աիկին գիւրոկը, նորա գաստիարակուհին, մօտեցաւ, նայեց և ասաց. „Մի՞թէ կարելի է այդպէս անհոգութեամբ նկարել. նայեցէք, ձեր նկարած ջուրը նման է ճլոպի, խոտը՝ կարծես յարդ լինի, իսկ ծառերը, չփառեմ, ճշմարիտ, թէ ինչի՞ն նմանում. ապա ուրեմն կարելի՞է արգեօք այդպէս անձունի նկարել. Ամօթէ է, դուք արդէն մեծ էք, բայց հինգ տարեկան աղջկայ պէս էք նկարում”

Վառվառէն իրեն անպատռած համարեց՝ հինգ տարեկան աղջկայ համեմատեցնելու համար և լոց եղաւ. արտասուքը կաթկթեցին նկարի վերայ և բոլորովին փշացրին նորան. — ստիպուած էր զէն զցել նկարը:

Այս առաջին վշտից յետոյ, եկաւ երկրորդը. հարկաւոր էր սովորել պիտնօի վերայ դասը, բայց արտասուած աչքերը գժուարութեամբ էին ջոկում երաժշտական խազերը (նօթաները), բոլոր նշաններ ջոկելը ձանձրութիւն դարձաւ և այդ դասը յանկարծ գժուարացաւ. Վառվառէն սկսեց անուշազիր կերպով խթել պիտնօի ստեղունքներին (ԿԼԱՎԻՇԻ), բարկանումէր, և նորան — նոր յանդիմանութիւն: Վերջապէս հարկաւոր էր վճռել թուարանտկան խըն-

Դիրք. բոլոր թուելը, կարծես գիտութեամբ դժուար էին, կարծես խառն ի խուռն էին դրուած:

Արդէն վաղուց պարապելու համար նշանակած ժամանակը անցել էր, բայց խնդիրը տակաւին որոշուած չէ: Վառվառէն բարկանումէր, լաց էր լինում, արտասուքով լուանում էր գրուածը և տեսրակը դարձաւ անձունի — կեզտոտուած երեսների մի ժողովածու, որոյ մէջ թուելը այնպէս էին փչացել, որ չ-ը չէր ուրոշվում իից և Յից, և այս պատճառաւ ոչ միայն Վառվառէն, այլ և մի ուրիշ, աւելի հանգիստ աղջեկ՝ չէր կարողանալ վճռել խնդիրը:

Մի երկու ժամ շարչարուելուց յետոյ և վերջապէս, մասսամբ տիկին Դիւրօկի օգնութեամբ, վճռեց անտառնելի, դժուար խնդիրը:

— Զեր մայրիկի մօտ հիւրեր են եւ կել, սրբեցէք աչքերդ, հանդարտեցէք, սանրուեցէք և գնացէք հիւրընդունարանը, ասաց տիկին Դիւրօկը: Վառվառէն այս բոլորը արեց, հայելու մէջ նայեց իւր վերայ և նըկատեց իւր ուռած, կարմրած աչքերը:

— Թոյլ տուեցէք ինձ, լու է, առաջուց գնալ պարտէզը, մի փոքր վազվել այնտեղ, մինչեւ աչքերս կը հովանան և չե երեալ իմ լաց լինելս:

— Բարի է, գնա, բայց միայն տանից ոչ այնքան հեռու: Ես չեմ կարող հիմայ գնալ պարտէզ, բայց ես, Վառվառէ, յշս դնումեմ քո խոհեմութեան վերայ:

Նա շնորհակալութիւն յայտնեց իրաւունք տալու համար և վազեց: Նա շատ ծանր և անախորժ էր լզ-

գում իւր սիրտը, արտասուքն արդէն
չկային, իսկ շնչափողը, կարծես, սեղ-
մօւած էր: Վառվառէն բարկանումէր
ոչ այնքան իւր վերայ, որքան գաս-
տիարակուհու վերայ, անտանելի նը-
կարի վերայ, երաժշտական անձունի
խազերի վերայ և զգուելի թուերի
վերայ, որոնք լուացվում, փշանում
են արտասուքից:

Վառվառէն վազվելով և շուտ
շուտ յետ նայելով, անցաւ պարտէ-
զը: Նա վախենումէր՝ որ մի գոյցէ
հիւրերը գտն և նկատեն նորա ար-
տասուած աչքերը: Ո՞Դուրս գտմ ես
գաշտը, ոյնտեղ օդը տւելի թարմէ,
երես տւելի շուտ կհովանայ^Ա, մը-
տածեց Վառվառէն, բայ արեց զըռ-
նակը և վազեց գաշտով, ծառա-
տունկի միջով, Ճահճի մօտ, այն-
տեղ ամենից հով է: Նա նստեց մի

քանի քայլ Ճահճից հեռու, տափա-
րակ քարի վերայ, Ճահճից ձեռներով
իւր երեսը և սկսեց իւր զրութեան
վերայ մասածել: Նորան թվումէր՝ որ
նա ամենանիբազդ երեխայ է, որ ա-
մենքը նորան նախատումէն և մինչեւ
անդամ պատժումն ըոլսրովին ան-
արդարացի, որ ոչ ոք նորան չէ սի-
րում, որ նորանից տւելի շատ են-
պահանջամ քան թէ միւս երեխա-
ներից: Այսպիսի մոզեր պատվումէն
նորա զիսում և գարթեցնում էին
նորա մէջ ամենածանր ապառու-
թիւններ: արաստուքն անդադար զը-
լորվում էին նորա երեսով և մեծ
մեծ կաթիւներով մանում էին նորա
մասերի արանքները:

Նա, երած աչքերով, նստած էր,
միայն յանկարծ, նորան երեխաւ,
որ իրը թէ մի կոսկի նշոյլ թռչու-

տումէ նորա առաջ սյս կողմ և այն
կողմ, և նորա լսելիքին հասան օտա-
րոտի երգի բառեր:

“Հոպ, հոպ, շուտով, շուտով քայ-
լենք առաջ սատոստալով: Վազենք ա-
րագ, վազենք առանց յետ նայելու,
քանի արեգակը չի բարձրացել, ման-
դաղը չի զօղանջել, խոսը չի թառա-
մել”:

Ճշող բարակ ձայնիկը, կարծես կամ
մօտենումէր կամ հեռանումէր: Վառ-
վառէն բարձրացրեց զլուխը՝ մթու-
թիւնը սկսումէր տիրել աշխարհը.
Նա իւր չորս կողմը նայեց և նորան
երեցաւ, որ կրակի նշցլը թռչկոտու-
մէ խոտի վերայ. զննեց և տեսաւ որ
դա իր մի ամենափոքրիկ մարդ է,
բարակիկ ոտներով, բարձր սրածայր
զլսարկով, որը մոմի նման լցու էր
արձակում: Հասակով նա կլինէր քա-

ռորդ արշինից ոչ աւելի, բայց զար-
մանալի շարժուն և միր. նա առանց
յոգնելու թռչումէր կամ մէկ, կամ
միւս կողմ, կամ ծածկվումէր խիս
խոտի մէջ, կամ թռչկոտումէր նորա
վերայ և ամենածաղրաշարժ թռիչք-
ներ էր անում: Ինքն անբողջապէս
կանաչ էր, միայն զլիսարկը կրակից.
զննելու ժամանակ՝ երեսը շատ ուրախ
և ծաղրածու էր երեսում, թէև կա-
նաչագոյն, բայց ոչ հեռացնող կամ
անախորժ: Երբ նա հանդիսաւ և ձեռ-
քերը կախ զցած կանգնում էր, այն
ժամանակ նա այնքան բարակ էր, որ
չէր կարելի ջոկել խոտի տերեկից և
նորան կարելի էր գտնել միայն լու-
սափայլ, շողշողուն զլիսարկով: Նա
թռչկոտումէր՝ շատ ծաղրաշարժ կեր-
պով խսկ և խսկ գորափ նման, և
նոյնպէս ինչպէս գորաը,



անգամ թուշելուց յետոյ և նորանից առաջ, ծնկները ծալելով, ցածանում էր և ձեռերով և ոսներով զէմառաւած հողին՝ կանգնում էր: Բայց ինչ գրութեան մէջ և զանուէր նա, ինչ որ էլ անէր նա, ոլուխը և վառվառն զլիարկը, ինչպէս կրակ, նայում էին գէպի վեր:

Այդ մարզը թռչելով այս և այն կողմ, մօտեցաւ Վառվառէին և կանգնեց նորա առաջ: Եթէ լինէր այլ ոք, կփախենար, իսկ նա - բոլորովին, ուշի ուշով գննեց նորան և հարցրեց. „Ի՞նչ ես գու՞“:

— Ինձ անուանումեն Ժիբ, և այս ասելով թռաւ, որովհետեւ երկար չկարողացաւ հանդիսաւ կանգնել:

— Ինչպէս գու ուրախ ես. քեզ, երեխ, ուսանել չեն սախում:

Ճիբը հանդիսաւ կանգնեց, ձեռերը,

զրեց կողքերին և աշխատեց վսեմկ ծանր գէմք ընդունել:

— Ուստինե՞լ ի՞նչ ես ասում: Մի՞՛ թէ ես պիտի ուստինեմ: Ես ամենից խելոք եմ, ես ինքս կարող եմ ամենքին ուսուցանել, իսկ եթէ մարզիք շուտ շուտ գոյին ինձ մօտ ուստինելու, նոքա աւելի բաղդաւոր կլինէին: Նկարչութիւններով, երաժշտութիւնով ու թռւաբանութիւնով չե կարելի բաղդաւոր լինել:

— Այո՛, զու ճշմարիտն ես ասում, բացագանչեց Վառվառէն, թռւաբանական խնդիրները շատ ձանձրակ են և ես նորանց բոլորովին չեմ սիրում:

— Այնպիսի թռւաբնութիւնն, որը դուք, երեխաներ, ուսանումէք, ձանձրակ է. ձեր բան ու գործն է համարել այն՝ ինչ որ չունէք, դատարկ թռւերի վերայ ձեր զլուխն էք ձա-



քայնում: Այս, ինչ կասեմ իմ թուարանութեան, ես համարումեմ միայն իմ ռակի ու արծաթը, որից շատ ունեմ ես:

— Ապա ո՞ւր է:

— Իմ մօտ՝ տանս է:

— Իսկ ո՞ւր է քո տունը:

— Այստեղ շատ մօտ է: Գնանք ինձ հետ, ես քեզ ցոյց կտամ իմ զարմանալի սենեակները մի և ողյուժամանակ՝ կտեսնես և իմ գեղեցիկ նկարները:

Մի՞թէ դու նկարել էլ զիտես

— Ի՞նչպէս չեմանամ: մինչեւ քո ներկեր պատրաստելի՝ արդէն ես մի մեծ պատկեր կտկեմ և կփերջացնեմ

Շատ էր ցանկալի Վառվառէի համար տեսնել, թէ ինչպէս կարելի է մի բոպէում անել այն՝ որ իրան մեծ դժուարութիւնով է յաջողվում նու

2
0
0
0
-

րան ցանկալի էր և նկարել և կարել, և գրել բայց միայն սովորել չէր կամենում: Այս կգոյի քեզ հետ, բայց վախենումեմ, տանը անհանդիս կլինեն ինձ համար:

— Ինչո՞ւ պիտի տնհանդիստ լինեն, մի քանի քայլ հեռու իմ տունս է, մենք մի բոպէում կհասնենք այնտեղ և մինչեւ քեզ ծնողներդ մինդան, գուաւելի շուտ կվերադառնաս տուն:

Վառվառէն, ինչպէս մեզ յայտնի է, նստած էր տափարակ քարի վերայ կոշակերով լի ճահճի եղերքում: Կոշակերի արանքներում ախզմ (Ճրի ցեխ, ախլ) էր կանգնած: Կրակի նշալը թոշկոտաց կոշակերի վերոյով և իւր ետեւ կանչեց Վառվառէին. Նա զընաց, բայց բոլորովին չկտրողացաւ հասնել նորան և շուտ շուտ յետ էր մնում: Ժիրը տմեն անգամ վերադառն

3



7/1-1922

նումեր նորա մօտ և օդնումեր նորան հետեւելու:

—Այդ ինչտեսակ անձոռնի և ծանրաշարժ ոսներ ունեք զուք, մարդիկներդ: Նայումես — աշապին են, բայց ման են զալիս, զանդաղ կարծես փայտէ ոսներ լինեն: Թռի՞ր Նայի՞ր, ահա այսպէս. ծնկներդ մի փոքր ծալիր, յետոյ մի անգամից թռիր, ինչպէս ես. ապա թէ ոչ կլսրուես ձահիճում:

Վասվանէն ձնիները մի փոքր ծալից, թռաւ, բայց չկարողացաւ հասնել մինչև միւս կոշար և խոր, շատ խոր, մինչև յատակը, ընկղմուեց ձահճի մէջ: Կրակի նշոյլը թռաւ նորա ետեից և երգեց. „Գեպի ցած հեշտ է, գէպի վեր գժուար, գէպի ցած հեշտ է, զէպի վեր գժուար“:

Յանկարծ նոքա երեւցան մի մեծ

սենետի մէջ: Անհամար բազմութիւնը փոքրիկ կրակների ամեն բուգէ, առաստաղի և պատերի վերայ վառվում և նոյնպէս շուտով հանգչում էին: Առաջին բուգէում վառվառէն ովնչ չկարողացաւ ջոկել անհաստատ, ազօտ լոյսովը, բայց փոքր առփոքը գննեց և տեսու, որ պատերից կախուած են պատկերներ:

Վառվառէն սկզբում շատ վախեցաւ, բայց փոքր առ փոքր նորա ուշքը եկաւ զլուխը և մատքերից, որ պատկերների համար զիսաւորապէս հետեւեց ծիրին. նա մօտեցաւ պատերին և սկսեց զննել: Այդ պատկերները շինուած էին պատին կըպցրած մամաւոից, զանազան բոյսերից, տերեներից, խոտերից և ծաղիկներից. հեռուից նոքա վաս չէին, բայց մօտից՝ ոչ մի տեսարան չէին ներկայացնում:

— Առաջնք են քո պատկերները,
հարցրեց Վառվառէն:

— Այո՛, կարծեմ նոքա բաւակա-
նին լու են և բնական:

— Ի՞նչ օգուտ: Նոքա թառամած
են—արհամարհական երեսի շարժ-
մանքով պատասխանեց Վառվառէն,
մեզանում այդպիսի նկարչութիւնները
պէտք չեն: Շուտ ինձ յետ դարձրու
այստեղից:

— Ո՛չ առաջ նայիր իմ հարստու-
թեանց վերայ, ծիծաղալով ասաց
ծիրը և թռաւ գէսփի առաջ: Վառ-
վառէն շտապեց նորա եռեւից, վա-
խնալով որ մի գուցէ աչքից կորցնի:

Նոքա կանդնեցին սեզանի մօտ, որի
վերայ ոսկի էր զիզած, բայց ուշադրու-
թեամբ զննելուց յետոյ՝ երկեցաւ
որ այդ ոսկի չէր, այլ կէճի զեղնած
տերեների մի գէզ:

Սեղանի մօտ նստած էին երկու
աղջիկներ, որոնք համարում էին
այդ կարծեցեալ ոսկիքը, որոնց վե-
րայ էլ նոյտ քունը տարել էր: Ֆիրը
նոյտ շարժեց, իսթեց (բաթեց) և
նախառեց քն.կոտութեան համար:
Աղջիկները զարթեցան և բարձրա-
ցրին զլուիները: Նոյտ երեսները
սպլանած և նուազուծ էին. նոյ-
ւածքները թոյլ ակամայ, անկենդան
Բայց Վառվառէն ուրախ էր մորդ-
կային զոյսւթեան համար և իսկոյն
խօսաց նորանց հեա: Ֆիրը հէնց զո-
րան էր սպասում: Նա իսկոյն փա-
խաւ:

Վառվառէն այդ նկառեց և սկսեց
գոռալ, կանչել նորան, բայց ի զուր.
Ֆիրը չվերադարձաւ և հեռուից մի-
այն լսուեցաւ նորա բարձրածայն ծի-
ծաղը: Այստեղ միայն Վառվառէն

Հասկոցաւ՝ որ իրեն խաբել են. նաև
սկսեց լով, կոտրառել ձեռները և
պոկոսել իւր զլիսի մաղելը: Սպըքա-
նած, նիշար, աղջկելքը մեղքացան
նորան. նոքտ մասրերիցին թէ ինչ
դրութեան մէջ են խրեանք և տառ-
ցին. շԱհրելի աղջկի, մի լոր, մի
կորցնիլ քո ոյժը դաստրի ափսոսան-
քով. աւելի լու է օդուտ քաղիր
մեր փորձով և փախսիր այսակից.
Քանի որ քո մէջ զեռ ոյժ և զօրու-
թիւն կոյ: Խակ եթէ թողնես՝ որ ժո-
մանակը անցնի, գու էլ մեղ պէս
կկորչես:

— Ուրեմն ի՞նչ անեմ ես:

— Այսուղից մինչեւ հօգի մակե-
րեցիթը բորձրացնումէ մի սանդուղք,
որի վերջին ասափհանից պիտի դէպի
վեր թոշել ողքան ոյժ կոյ, այն ժա-
մանակ գու զլիսովդ կկոտրես հողի

բարտակ խռուը, որը արգելումէ գուրս
թռչել

— Գնանիք բոլորս միասին, սիրելիք,
բացագանցեց Վառվառէն, և բոլորս
միասին փորձենիք մեր բազզը:

— Ոչ, մենք չենք կարող ախրու-
թեամբ պատասխանեցին աղջկերքը.
մենք անց ենք կացած ժամանակը և
այժմ մենք այնպէս թողլ ենք և այն-
պէս ակար, որ մեզանում չի բաւա-
կանանալ մինչեւ անգամ անգուղքով
բարձրանալու համար ոյժ:

— Ի՞նչն է ձեզ այդպէս նուազե-
ցրել հարցրեց Վառվառէն, կարծեմ,
այսուղի մի մեծ աշխատութիւն չկայ:

— Անգործութիւնը, աշխատանիքի
պակասութիւնն է խակապէս մեր նը-
ւազութեան և ակարութեան պատ-
ճառը: Աւտաեղ ամեն բան գործվում
է այնպիսի արագութեամբ և անհի-

մըն, որ մենք անզործութիւնից մահու. չափ նեղսրտում ու ձանձրանում ենք:

— Ե՛, բաւական է. մի՞թէ կարելի է նեղսրտել ձանձրանալ, երբ գործումն այն՝ ինչ որ կամենում ես, երբ առաւօտուանից մինչև երեկոյ խաղումնես. Ես տեմնումնմ որ դուք այստեղ շատ խաղալիքներ ունեք:

— Այս, խաղալը լաւ է՝ աշխատութիւնից յետոյ, գործից յետոյ, երբ կյոդնես, իսկ մշամպէս միայն խաղալը – ձանձրալի է: Չե՛ս հաւատավում, թէ այստեղ ներքեւում որքան երկար օր է: Վե՛րջ չկոյ նորան: Սի և նոյն ժամանակ օղը շատ ծանր է և չնչարգելառիթ:

Այս՝ օղը, խակապէս, ծանր է, պատասխանեց Վառվառէն, շուտով գնանք. իմ կարծիքով աւելի լաւ է

ամբողջ օրը աշխատել, քան թէ շունչ քաշել այնպէս, ինչպէս այսեղ:

Աղջեկները տարան նորան զանազան պայմաներով և ծուռումնուր ձանապարհներով. մանր կրակները ամեն մի լուսպէում վառվում էին և նոյնպէս շուտ հանգչում. Վառվառէի սաերի վերայից սողում, անցնում էին օձեր և անձրւային ճիճուներ. նազարհուրում էր և յանկարծ ակտայի գոռում էր և զողում: Վերջապէս նոքա մօտեցան մի ինչ բանի, որ նըմանումներ սմնդուղքի. նորա աստիճանները կազմուած էին հողից և մամուռից, բայց այնքան վատ էին, որ աւելի հողի մէջ փոս քցածի էին նմանում, քան թէ շինած տատիճանների. նորանց ամեն մէկում հաղիւ մի ոտ կտեղաւորէր:

Աղջիկներից մէկը շատ շուտ յոգնեց
և չկարողացաւ միւսներին յետևել.
Նա բանում էր բերանը և օդ էր
շնչում: Երկրորդը գնաց վառվառէի
հետ մինչև վերի աստիճանը, բայց
այսուղ պիտի կանգնէր. նորանում
թռչելու զօրութիւն չկար. նա լա-
ցաւ և վառվառէին ասաց ո՞Քոյրիկ,
մնաս բարեաւ ես աւելի չեմ կարող
գնալ: Իսկ դու ժողովեր քո բոլոր
ոյժդ և թռիր, դուքէ յաջողվի: Ո՞վ.
Աստուած իմ, ինչու ես սկզբում
անցկացրի ժամանակը»:

Վառվառէն ժողովնեց իւր ոյժը,
թռաւ, զլխով կպաւ կակող հողին և
վայր ընկաւ: Սակայն առաջին անյա-
ջողութիւնը նորա արիութիւնը չը-
խեց, յոյսը չկտրեց. նա նորէն փորձ
փորձեց և կրկին անյաջողութիւն.
Նա մի փոքր հանգստացաւ և ժողո-

վեց իւր բոլոր ոյժ և կարողութիւնը
վերջին, յուսահատ և վասնգաւոր
թռիչքի համար և խկապէս, դուրս
սուզեց ձահձնային աղմից: Նա շնչեց
սառը գիշերային օդը և վերջապէս
մեծ գժուարութեամբ դուրս ելաւ
կոշափ վերայ: Գիշերը հասել էր և
չորս կողմը ոչինչ չեր կարելի աեսնել:

— Վառվառէն սկսումէր վախենալ. նա
սկսեց օդնութիւն կանչել նա յոյս
ունէր: թէ տանը կլսեն նորա ձայնը
և կգան նորա ետեից. բայց գժբաղ-
դաբար միայն անտառային արձա-
գանգն էր նորան պատասխանում:

Յանկարծ ձահձի վերայ երեւցաւ
լցու. ինչպէս յառաջանումէ արտա-
ցոլող հայելի ունեցող լապտերից:
Վառվառէն նայեց թէ որտեղից է
այդ լցու և աեսաւ իւր չափ մի գե-
ղեցիկ աղջիկ. նորա ամբողջ հա-

գուստը սպիտակ էր, ձեռքում բըռ-
նած էր կերոն (մեծ մամ, Փառել).
Երեսի գծագրութիւնը և գէմքը գե-
ղեցիկ էր, շէկագոյն մազերը ոլորվում
էին ուսերի վերայ, նորա հայեացքը
այսքան հեղ էր և խելացի, որ Վառ-
վառէն վերան նայելուց չէր կշա-
նում և ցանկանումէր նորան զրկել:
— Ի՞նչպէս դու յայտնուեցիր այս-
տեղ, գիշերը, մէնուկ, մարդկային բը-
նակութիւնից այսքան հեռու, հար-
ցլեց գեղեցիկ աղջեկը:

— Ես ճանապարհս կորցրել եմ,
պատասխանեց անվաստահութեամբ
Վառվառէն. նա ամաչում էր խոս-
տովանել իւր յանցանքը: Դու, ինչ-
պէս երեսումէ, այդքան բարի ես,
մարդասէր ես, լուսաւորիր ճանա-
պարհս և տար ինձ առւն:

— Մեծ ուրախութեամբ, բոյց ա-

ռաջ նայիր իմ տան վերայ: Դարձիր
և աես այն բարձր լեռուը:

Վառվառէն նայեց. լեռան վերայ
մի ինչ լուսաւորումէր. նա կարծեց
թէ այն լուսինն է ծագում, բոյց
աղջեկը զիտակը տուեց նորան և
հրամայեց նայել նորանով: Վառվա-
ռէն զիտակով պարզ տեսաւ մի մեծ
տուն, լուսաւորուած հազարաւոր
ճրագներով. բացուած դռներից և
բացուած լուսամուտներից լցուը ար-
ձակումէր իւր ցողերը. պատերը զար-
դարուած էին պատերներով. լուսա-
մուտների վերայ գրած էին գեղեցիկ
ծաղկներ: Բոլոր սենեակները լցուած
էր զանազան հասակի փոքրիկ աղ-
ջեկների և աղաների բազմութիւնով,
ամեն ոք մի որևէիցէ բանով պարա-
պումէր, մի քանիսը կարգումէին, ո-
մանք կարով և ձեռագործութիւնով



Էին պարապում, միւսները նկարում
էին, գրում էին, երաժշատական գոր-
ծիքների վերայ ածում էին, ամենքի
դէմքից արտայայտվում էր բաւակա-
նութիւն, ուրախութիւն. սենեակնե-
րից մէկում, ինչպէս երեսում էր՝ պա-
րապմունքից յետոյ հանգստանում
էին. խաղում էին զանազան խաղեր
և պարում էին:

Ա՛խ, այնաեղ ինչպէս լաւ է,
որքան կցանկայի լինել այնաեղ բա-
ցանկանչեց վառվառէն:

Ո՛չ գեռ քեզ չի կարել. դորա
համար հարկաւոր է պատրաստուել
ժրածան ուսումով և մեծ համբերու-
թիւնով: Եթէ ցանկանում ես ինձ
հետ այնաեղ գնալ, ուրեմն ուսիր,
հսմերութիւն ունեցիր, մի սրտնե-
զիր և պարապիր: Այդ տան ճանա-
պարհը դժուար է, և ով կցանկայ

մոնել նորա մէջ՝ արիութիւնը չպիտի
կորցնի, չպիտի գօրութիւնից ընկնի:
Քեզանում կըաւականանա՞ն արդեօք
այն էլ միւսն էլ:

— Չգիտեմ, բայց ես կաշխատեմ.
ես իմ բոլոր ոյժս գործ կդնեմ, որ
արժանանամ այնտեղ լինելու, ես բո-
լորը կկատարեմ ինչ որ դու ինձ կա-
սես, միայն այնտեղ համելու հա-
մար օգնիր ինձ:

Փոքրիկ աղջեկը մոռածեց, Վառ-
վառէի ձեռքը բռնեց տարաւ նորան
մի քանի քայլ բարձրացրեց իւր
կերոնը և, ցցց տալով հեռու, Վառ-
վառէի տան վերայ, ասաց. ոգնանք
հիմա քո ծնողների մօտ. միմիայն
քեզ մօտ տանը դու կարող ես բա-
նաւ քեզ համար Ճանապարհ դէպի
այն լեռան վրայի գեղեցիկ տունը:
Ճանասէր, ուշադիր և լսող եղեր,



կուտարիր և նկատիր ամեն բան, ինչ
թոյց կոյայ քեզ քու դաստիարակու-
հին, և դու շուտով լաւ կլինես:
Մաքումի ունեցիր, ամեն մի լու
անցկացրած օրդ՝ մի աստիճան կդնի
լեռան վերսցի տան սանդուղքին,
բայց դորս փոխարէն՝ անհնազան-
դութիւնով և ծուլութիւնով անց-
կացրած մի օրըդ, աւելի շատ աստի-
ճաններ կքանդի, քան թէ մի շա-
բաթուայ մէջ կիարողանաս գնել: Ու-
ղեղ մի տարիից յետոյ այս օրուայ
թուին արի այս տեղ և քարի վե-
րայ նստիր, որի վերայ նստած էիր,
և որտեղց ծիրը քեզ հրապուրեց
գէպի ճահիճը: Ես կգամ և մենք
կտեսնենք որքան մեծ է քո աշխա-
տութեան սանդուղքը:

— Ա՛խ, որքան երկար միջոց: Ամբողջ
տարի, հառաջելով տասաց Վառվառէն:

— Մի հոգար, տարին շուտ կանց-
նի, նամանաւանդ երբ քո սանդուղ-
քի վերայ կմատածես և ամենայն օր
այնքան կաշխատես, որքան հարկա-
ւոր է: Մնա՞ս բարեաւ, աւելացրեց
նա, երբ հասցրեց Վառվառէն մին-
չե պարտիզի գոնակը: Քեզանից է
կախուած, որ մենք կրկին տես-
նուենք, իսկ երբ այդպէս անբաւա-
կան և բարկացու կլինես ինչպէս
մինչե այժմ: այն ժամանակ բոլորու-
վին չեմ գալ:

— Ո՛չ, եկ ինպիեմ: ես օր և դի-
շեր մոքումն կունենամ քեզ, կաշ-
խատեմ որքան կների ոյժս. միայն,
նայիր, դու էլինձ մի մոռանար:

— Միթէ ես խաբեբայի^o կամ մո-
ռացկոտի^o եմ նմանում, քաղցր և
նազելի ժպիտով, ասաց անձանօթը,
որ և Վառվառէն մեծ ուրախութիւն

պատճառեց, և նա վստահ գնաց տուն. իսկ երբ յետ դարձաւ, որ կրկն տեսնի լուսեղէն աղջկան, նա չելեաց. արդէն անշայտացել էր:

Ուղեղ մի տարիից յետոյ, մի և նոյն օրը Վառվառէն գնաց մեղ յայտնի քարի մօտ: Նորա սիրով սասաթկ քաբախում էր, նա նստեց տափարակ քարի վերայ: Նա ամբողջ տարին մեծ ջանասիրութեամբ աշխատել էր, պարապել էր իւր դասերով, բացի մի քանի օրերից, որոնցում ծուլութիւնը նրան յազթել էր Այժմ հէնց այդ օրերն էին վրդովում Վառվառէին. նա նորանց յիշում էր և իւր այդ թուլութիւնների համար ինքն իրան շատ դառը նախատում էր:

Շատ անգամ կորցնում էր իւր սէրը դէպի պարապմունքը, շատ ան-

գամ նա փոքր էր մնում, որ ամենայն ինչ անհոգութեան տար. բայց գեղեցիկ տան մասին ունեցած յիշութիւնը և կերոնը ձեռքին նազելի աղջկայ դէմքը՝ սորիպում էին նորան, իրան ուղղելու վճռի վերայ հասասա մնալ, և նա այդպիսով յաղթումէր իւր ծուլութեանը:

Վառվառէն նստել էր քարի վերայ և սպասում էր մթնանալու. մութը հետպհետէ սաստկանում էր, իսկ աղջկը տակաւին չէր երեսում Վերջապէս նա սկսեց անհանդառանալ և տիրութեամբ ասաց. „Ախ, Աստուած իմ, մի՞թէ ես ոչինչ լւաչեմ արել այս տարուայ մէջ,“ և արտասուքը կաթկթացին աչքերից:

Յանկարծ՝ հեռու թփերի և ծառերի միջեց՝ փայլակնթաց լոյս երեւաց. այդ լոյսը վայրկեանէ վայրկեան

մօտենում էր և ահա երեցաւ աղջիկը իւր ձիւնանման հագուստով Այս անգամիս նս Վառվառէին աւելի գեղեցիկ թուաց. նորա երեսը, կարծես, մի տեսակ, հոգի ազնուացնող և բարձրացնող յատկութիւն էր ստացել Վառվառէն անզիտակցաբար ծունկ չոքեց և, ինչպէս աղօթքի ժամանակ, ձեռքերը դրեց կուրծքի վերայ:

— Ենորհակալ եմ քեզանից նորա համար՝ որ դու եկար, ասաց Վառվառէն:

— Դորա համար ինձ շնորհակալութիւն մի անիւ այլ քո ջանասիրութեանը և քո հաստատամութեանը. ծուլութիւնովդ և անհետ զանդութիւնովդ՝ դու ինձ կհեռացնէիր:

— Կարո՞ղ եմ արդեօք այժմ մինչեւ

վերջը քեզ հետ մնալ հարցրեց Վառվառէն:

— Կնայինք և դորա համար յետոյ կիսօսանիք իսկ այժմ աեմնենք մե՞ծ է արդեօք քո անդուղքը:

Աղջիկը Վառվառէի ձեռքից բըռնեց և տարաւ նորան, լուսաւորելով ձանապարհը իւր կերոնով. այդպէս հասան նոքա մինչեւ բըռը ստորոտը, որի գլխին փայլումէր հրաշալի, խորհրդաւոր տունը:

Նորանք կանգնեցին մի օպարոտի սանդուղքի առաջ. զառ ի վեր տեղում զցած էին երկու երկաթեայ ձողեր, իսկ նոցա մէջ, փայտեայ փոքրիկ ձողերով աստիճաններ, որք կազմուած էին թուանշաններից, կարծես քարեզրիչով զրուած էին քարետախտակի փերայ:

— Ահա, ասաց աղջիկը, քո ա-

ռաջիղ ձգուած է աշխատութեան,
սանդուղքը գնա նորա վերայով,
աստիճանները կազմուած են քո թր-
ւաբանական ինդիրներից, տեսնո՞ւմ
ես ինչպէս մէկ մէկի ետևից են զը-
րուած:

Այ հրա՛շք, բացագանցեց Վառ-
վառէն, աստիճանների վերայ բարձ-
րանալով, բայց յանկարծ կանգնեց
և ասաց. Այս ինչ է, ես չեմ կա-
րողանում վնալ այստեղ սարսափելի
շփոթութիւն է:

—Տեսնո՞ւմ ես արդեօք, այս շփո-
թութիւնը նորանից է յառաջ եկել
որ դու մի քանի օր ծուլացել ես
Եթէ այդպիսի օրեր շատ լինէին,
այն ժամանակ պիտի ակամայ յետ
դառնայիր, բայց ես յուսով եմ—նո-
քա շատ քիչ են. ես քեզ կօգնեմ
անցնել:

Կրկին աստիճանները ուղղուեցան
և Վառվառէն շուտ շուտ բարձրա-
նում էր վերև, բայց մի քանի ժա-
մանակից յետոյ նորէն կանդ առաւ-
և տիրութեամբ ասաց.

—Այ ևս աստիճաններ չկան,
միայն ծաղկիներ են ածած:

—Ոչնչ, գնա համարձակ, այդ
քո ծաղկիներն են. լաւ զննիր. այդ
ծաղկիները, միթէ դու չե՞ս ճանա-
չում նորանց: Այդ քո նկարածներն
և ասղագործածներն են: Համարձակ
առաջ գնա՞:

Վառվառէն սկզբում վատահանում
էր ոս զնել ծաղկիների վերայ. նա
վախենում էր, մի գուցէ ծալծուեն
իւր ոտի տակ և վայր ընկնեն, բայց
երեաց որ, չնայելով գեղեցկութեանը
երկաթի պէս պինդ և հաստատուն
էին, և աստիճանների պէս նոցա

վերայ էլ շատ յարմար և հեշտ կար
րելի էր բարձրանալ:

Բայց ահա երևեցաւ մի նոր սահս-
րուղք, միայն առաջինից աւելի բա-
րակ և նորիք, նա անհամեմատ զառ-
ի վեր էր ձգուած: Վառվառէն ա-
հով կանգնեց նորա առաջ:

— Ինչո՞ւ կանգնեցիր, համարձակ
առաջ գնա, միթէ դու չե՞ս տեսնում
— այդ քո երաժշտական աստիճան-
ներն են: Տուր ձեռքդ և գնանք:

Նոքա գնացին, ամեն քայլում հըն-
չում էին ձայներ, սկզբում միմիան-
ցից բաժանած, անկարգ, բայց փոքր
առ փոքր, քանի նոքա բարձրանում
էին — այնքան աւելի պարզ լաւ, կար-
գաւորված և բարձր. նոյս ներդաշ-
նակութիւնը կարծես թեեր էին
տալիս Վառվառէին և նա ոչ թէ
գնում էր, այլ թռչում էր վերև:

Ահա նա դուրս եկաւ մի գեղեցիկ
կանաչ գաշտի վերայ, որտեղ կար
պարտիզ մի վայելուչ նստարան:

— Նստենք և հանգստանանք, ա-
սաց լուսեղին աղջիկը, այդ է քո ա-
ռաջին ճանապարհորդութեան նպա-
տակը, սրանից յետոյ դեռ ևս ճա-
նապարհ չկայ քեզ համար:

— Ի՞նչպէս, մի՞թէ ես այսօր չպի-
տի մանեմ տուն, ասաց շտապաւ
և տիլութեամբ Վառվառէն:

— Ո՛չ, մի տարին բաւական չէ,
լուսաւոր տունը մտնելու համար.
այսուհետեւ էլ ջանասէր եղիր, այն
ժամանակ եկող տարին աւելի շուտ
կանցնի: Յոյսդ մի կորցնիր, մեզ մօտ
տանք անշուշտ կլինիս. նայի՛ր, ինչ-
պէս մեծ է քո մի տարուայ սան-
դուղքը:

— Ա՛յս, Աստուած իմ, իսկ ես

կարծում էի թէ մենք հէնց այսօր
կլինենք այնտեղ:

— Նոյնի ինքդ, կարելի՞ է արգեօք,
ասաց աղջիկը և պահեց թփերի
մէջ իւր կերոնը: Վառվառէն նայեց.
Եռան զագաթում, նորա առաջ
կագնած էր մի և նոյն լուսաւոր
տունը. նա փայլումէր հազարաւոր
ճրագներով բայց նորա հեռաւորու-
թիւնը այնքան մեծ էր, որքան և
այն ժամանակ, երբ նա նորա փերայ
նայումէր ձահճի մօտից. լուսինը
ծագեց և նորա լոյսով վառվառէի
և տան մէջ բացուեցան անմատչելի
ժայռեր, վիշեր, վլատակներ և հե-
ղելներից փորուած ահազին փոսեր,
այնպէս որ՝ այլ ևս անկարելի էր մի
քայլ անգամ առաջ դնել:

Վառվառէն տիպեց և քիչ էր մը-
նում որ արտասուեր, ասաց.

— Է՛հ, այսպիսի ձանապարհով
ոչ միայն այժմ, այլ և ոչ մի ժամա-
նակ գնալ չել լինիլ:

— Դու սխալվումես. անցեալ տա-
րուայ գնացած ձանապարհով սորա-
նից լաւ չեր. այն ժամանակ կանգ-
նած էիր ձահճինում, մինչեւ լեառը
շատ էր հեռու և գու չկարողացար
տեսնել նորա անհարթութիւնները:
Գիտացի՞ր. որքան մենք մօտենում
ենք մեր նպատակին, այնքան աւելի
պարզվում է ձանապարհի բոլոր ան-
հարթութիւնները: Միշտ լեռները
հեռուից աւելի հաւսար և մատ-
չելի են թվում, քան թէ մերձակա-
յից, երբ մօտենում ես նոցա:

Վառվառէն տխուր կախ զցեց զը-
լուխը, բայց աղջիկը միսիթարումէր
նորան և համնզում էր աւելի հաս-
տատ աշխատել.

— ինչպէս այս տարի ամեն մի օր,
ամեն մի յաջող պարապմունք տա-
տիճաններ էին գնում քեզ համար,
նոյնպէս և յառաջիկայ տարին՝ օրեց
օր՝ նոյնպէս կաւելացնի տատիճան,
կամ կամուրջի մի մասն, որ ձգվումէ
վլատակների և անդունդների վերայ.
կմնաս ապրեօք մշտապէս այստեղ,
թէ առաջ կերթաս՝ կախուած է
քեզանից: Մի տարիից յետ մենք
կրկին կհանդիպինք քեզ հետ՝ քա-
րի մօտ և ես հաւատացած եմ, քո
ճանապարհը շատ երկար կլինի:
— Այո՛, որ կրկին համոզուեմ, թէ
մնումէ անցնելու մի այսքան էլ,
կամ աւելի քան թէ անցել եմ:

— Հետեւալը կլինի քեզ համար և
աւելի կարծ և աւելի հեշտ. սա-
կայն, եթէ դու ախտոսում ես, որ
հետեւ ես դու ինձ, կարող ես գը-

նալ այնտեղ որսեղից որ եկար. զի-
տացի՛ր, աշխատաւթեան ձանտպարհը այն-
պիսի յատկութիւն ունի, որ նորու
վերայ արգելքներ չկան. հարկաւոր
է կամ առաջ գնալ կամ յետ դառ-
նալ: Ապա յետ նայիր:

Եւ աղջիկը գիտակը տուեց Վառ-
վառէին և նորան յետ շըջից: Վառ-
վառէն սկզբում՝ ոչինչ չկարողացաւ
որոշել, թէ ինչ է նորու առաջ. վեր-
ջապէս տեսաւ իրան դասատան մջ՝
սեղանի մօտ, որոյ վերայ զբուած
էին ճղճղուած և աղտոտած գորքեր,
անմաքուր աետրակներ, քսմած և
ներկերը վեր թափած նկարներ:

— Ի՞նչպէս է քեզ թվում այն
կեանքը, հարցրեց աղջիկը:

— Ո՛չ ո՛չ բոլորովին լաւ չէ, ես
այն ժամանակ չափազանց սրտնեղում
եի, և վերջապէս այդ ամենը ինձ



ատելի է. չեմ հասկանում թէ ինչ
պէս այդպէս անկարգ կարող էի լինել եւ:
—Ապա հիմայ նայիր այն կողմը:
Վառվառէն տեսաւ, ինչպէս ինքը
նստած է քարի վերայ, կարմրած,
արտասուալից աչքերով, իսկ նորա
առաջ թռչոտումէ լուսատու մար-
դը՝ ծիրը: Բայց նա անյայտացաւ և
Վառվառէն կրկին, ինչպէս կենդանի,
նստած էր քարի վերայ. որս կողմը
գիշեր էր:

—Աստուած իմ, ինչպէս ես ան-
խոհեմ, անբազդ եմ եղել: Ոչ, ո՛չ,
ես չեմ կամենում յետ գառնալ բո-
լր ուժով պիտի աշխատեմ և, թէ և
ինձ վիճակուած չէ երբէք հասնել
լուսեղէն առնը, բայց կրկին յօյսս
չպիտի կորցնեմ և պիտի դիմեմ դէ-
պի այն:

—Եա՛տ լաւ, Ո՛քան ես ուրախ

եմ արխացիր և աշխատիր քոյրիկ,
շուտ թէ ուշ՝ նոյնպէս կլինիս այն-
տեղ՝ տան մէջ: Այժմ մնաս բարեաւ:
Ժամանակ է երկուսիս ևս գէպի
գործ:

Վառվառէն չփառէր ինչպէս, բայց
երկեցաւ իւր ծնօղների տանը: Նա
դարձեալ աշխատումէր կրկին ջանա-
սիրութեամբ և ամեն տարի, շատ
տարիների ընթացքում, պատահում
էր լուսեղէն աղջկայ հետ և տարեց
տարի մօտենում էր նպատակին: Նո-
րա աշխատութիւնքը և ջանքը իւր
համար ճանապարհ, էին բաց անում
տարեց տարի գուրս էր գալիս կամ
նոր տատիճան կամ շինվում, էր կա-
մուրջի մի փոքր մասը՝ անդունդի
վերայով անցնելու համար:

Վերջապէս հասաւ բաղդաւոր բո-
պէն. Վառվառէի առաջ բացուեցան

զարմանալի շինութեան գոները և
նա մտաւ միշտ ուրախ և բաղդա-
ւոր աղջիկների շարքը, նոքա անընդ-
հատ պատմում էին իւրեանց կեցու-
թիւնից և հաւատացնում էին նո-
րան, որ նորան էլ այնտեղ այնպէս
լու կլինի: Նոքա ցոյց տուեցին
Վառվառէին իւրեանց պարապմունք-
ները և նա շատ ուրախացաւ նորա
համար, որ ինքն էլ կկարողանոյ այս
բոլորով նոյնպէս պարապել:

Վառվառէի սիրուը լցուած էր
շնորհակալութեամբ, և նա արատ-
այցանց այդ իւր ուղղեցոյցին:

— Ձե՞ս կամենալ արդեօք յետ նա-
յել, ասաց նա, զիտակը տալով Վառ-
վառէին:

Վառվառէն նայեց նորանով և զար-
մանքից կարծես զարհուրեց. գեղեցիկ
շինութիւնը այլ ևս լեռան վերայ չէր:

այլ ներքեում հողի վերայ, իւր
ծնողների զիւղական պարտիզի մէջ.
աս տեսաւ որ իւրեանք Ճեմում են
ծառուղիում:

— Այս ի՞նչ է, բացազանչեց Վառ-
վառէն, մի՞թէ ես մեր տանն եմ:

— Այո՛, ուրախութեան և աշխա-
տանաց բնակարանը տեղափոխուեց
քո ծնողների տունը. զու յաղթե-
ցիր այն տարածութիւնը, որով այդ
տունը բաժանվումէր ձեզանից:

— Բայց ինչպէս այստեղ բոլորը
գեղեցիկ է, ուրախութեամբ բացա-
զանչեց Վառվառէն. այժմ աշուն է,
իսկ այստեղ ծառերը և խոտը այս-
չափ կանաչ, թարմ և գեղեցիկ են:

— Այդ այդպէս է թվում քեզ,
որովհետեւ նոցա լուսաւորումէ տան
մէջ լցուած փայլիւնը: Այժմ, որով-
հետեւ պիտի բաժանուենք, հրաժա-

լուենք միմիանցից, կտամ քեզ խոր-
հուրդ. մի՛ հպարտանար և մի՛ պար-
ծենար նորանով՝ որ գու դժուար
աշխատութեան սանդուղքով ան-
ցար, ապա թէ ոչ՝ տան հեզ և
քաղցր լոյսը՝ պայծառութեան և
ցաւագարութեան կիոխուի և կկու-
րացնի քեզ, և գու բոլորը կտեսնես
ամենավատթար կերպով՝ քեզ ոչինչ
դուր չի գոլ և ամեն բանից անբա-
ւական կլինես:

—Մնա՛ ինձ հետ և այսուհետեւ
էլ ուղեցոյց եղեր ինձ; վրդովված
բացագնչեց Վառվառէն:

—Զեմ կարող. միայն գու չես ինձ
յանձնուած. ես շատերի եմ օգնում;
շատերի եմ առաջնորդում. իսկ եթէ
ես քեզ երբ և իցէ հարկաւոր կլի-
նեմ, դու ինձ կանչիր սրափից
և ես իսկոյն քեզ օգնութիւն կը-
շասնեմ:

—Բայց ես չգիտեմ քո անունը,
ուրեմն ի՞նչպէս կանչեմ քեզ:

—Ես ունեմ մի քանի անուններ.
ինձ անուանում են և աշխատախրա-
լիւն և հասպատաճառիւն և գոյնու-
լիւն: Մնա՛ բարեաւ, երբ հարկաւոր
կլինեմ այդպէս ել կանչիր ինձ:

Սպիտակ, լուսեզէն աղջիկը կե-
րոնով՝ անյայտացաւ. Վառվառէն
երեցաւ իւր պարտիզում; և
նա կրկին անգամ ինքն իրեն խօսք
տուեց՝ երբէ՛ք չթողնել գեղեցիկ
երկոյթի ցոյց տուած ճանա-
պարհը:





ԳԻՆՆ է 25 ԿՈՊ.

5

0004033

2013



